

Էլեկտրական էներգիայի մատակարարման
(Մատակարար-մինչև 6(10) ԿՎ լարման ցանցից սնվող Սպառող
(բացառությամբ բնակչության))

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Դ N 0303

« 07 » 02 2013

բ. Եղեգնաձոր

(կնքման վայրը)

Մատակարար «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ «Արարս» Ս/Ը

(ընկերության անվանումը)

(Եղեգնաձոր ցանց)

(մասնաճյուղի անվանումը)

դեմս Տնօրեն Հ. Հովհաննիսյան

(անունը, ազգանունը, պաշտոնը)

որը գործում է Ընկերության կանոնադրության և ՀՀ օրենսդրության հիման վրա,

(գործունեությունը կարգավորող փաստաթղթի անվանումը)

մի կողմից, և Սպառողը Հ. Հ. Պապիկյան 07.02.2013 թ. էլեկտրական պահանջարկով

(անունը, հայրանունը, ազգանունը կամ անվանումը)

Ի դեմս Քանաճյանի Իվեր Վարդան Գևորգյանի

(անունը, ազգանունը, պաշտոնը)

որը գործում է Քանաճյանի Իվեր Վարդան Գևորգյանի և ՀՀ օրենսդրության հիման վրա,

(գործունեությունը կարգավորող փաստաթղթի անվանումը)

մյուս կողմից, համատեղ կոչվելով կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրի համաձայն Մատակարարը պարտավորվում է Սպառողին մատակարարել
Էլեկտրական էներգիա, իսկ Սպառողը պարտավորվում է վճարել մատակարարված էլեկտրական
էներգիայի դիմաց:

2. Կողմերի պարտականությունները

2.1. Կողմերը պարտավոր են ղեկավարվել «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության
օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով, Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2006 թվականի
դեկտեմբերի 27-ի «Էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնները
հաստատելու մասին» N358Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրական էներգիայի մատակարարման և
օգտագործման կանոններով» (այսուհետ՝ ԷՍՕԿ) և սույն պայմանագրով:

2.2. Մատակարարը պարտավոր է.

1) մատակարարել Հայաստանի Հանրապետության 2004 թվականի դեկտեմբերի 23-ի
N 1925Ն որոշմամբ հաստատված էլեկտրամագնիսական համատեղելիության վերաբերյալ
տեխնիկական կանոնակարգով սահմանված որակի էլեկտրական էներգիա.

2) ապահովել էլեկտրաէներգիայի մատակարարումը Սպառողին՝ սույն պայմանագրին կցված
Էլեկտրամատակարարման սխեմայով նախատեսված հուսալիությամբ.

3) մինչև յուրաքանչյուր ամսվա 10-ը Հայաստանի Հանրապետությունում գործող բանկերի, փոստային
բաժանմունքների համապատասխան սպասարկման կետերում տեղադրել տեղեկատվություն
Նախորդ ամսվա ընթացքում Սպառողի կողմից սպառված էլեկտրաէներգիայի քանակի և արժեքի
մասին, եթե տեղեկացման այլ կարգ նախատեսված չէ սույն պայմանագրի 8-րդ գլխով.

4) Սպառողի դիմելու դեպքում 0281-2-08-31 հեռախոսահամարով տրամադրել շուրջօրյա
Տեղեկատվություն կամ պարզաբանում վերջինիս դիմում-բողոքների և հարցադրումների ներառյալ
Էլեկտրամատակարարման ընդհատումների դադարեցումների պատճառների և վերականգնման

Ժամկետների, սպառված էլեկտրաէներգիայի քանակի և արժեքի, վճարման ժամկետների Մատակարարի և Սպառողի իրավունքների ու պարտականությունների և այլնի վերաբերյալ
7) ԷՄՕԿ-ի 75-րդ կետով սահմանված ժամկետում պատասխանել սպառողի բանավոր դիմումին բանավոր, գրավոր դիմումին՝ գրավոր, իսկ էլեկտրոնային փոստով ստացված դիմումին
8) Էլեկտրոնային փոստի միջոցով, եթե առանձին դեպքերի համար ԷՄՕԿ-ով այլ ժամկետ սահմանված չէ
9) Վճարման փաստաթղթերում կամ հաշվում գրառումների սխալ հայտնաբերելու կամ Սպառողից այդ մասին դիմում ստանալու դեպքում ԷՄՕԿ-ի 53-րդ կետով սահմանված ժամկետում ստուգել իր գրառումները և արդյունքների մասին գրավոր տեղեկացնել Սպառողին, սխալի առկայության(հաստատման) դեպքում աղդումը հաշվի առնել ընթացիկ ամսվա համար ներկայացվելիք վճարման փաստաթղթերում:

Սպառողի պահանջով ԷՄՕԿ-ի 62-րդ կետով սահմանված ժամկետում ստուգել Սպառողի առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի ճշտությունը և նրան ներկայացնել դրա աշխատանքի ճշտության մասին գրավոր եզրակացություն:

Իր միջոցների հաշվին կատարել առևտրային հաշվառքի սարքերի աշխատանքի ճշտության ստուգման հետ կապված բոլոր ծախսերը, բացառությամբ ԷՄՕԿ-ի 64-րդ կետով նախատեսված դեպքի:

ԷՄՕԿ-ով սահմանված դեպքերում և կարգով փոխարինել Սպառողի առևտրային հաշվառքի սարքերը և փոխարինումից հետո համապատասխան փոփոխություն կատարել սույն պայմանագրում (հավելված N1). Սպառողը պարտավոր է վճարել յուրաքանչյուր ամսվա ընթացքում իր սպառած էլեկտրական էներգիայի դիմաց՝ սույն պայմանագրով սահմանված կարգով:

3. Սպառված էլեկտրաէներգիայի քանակության և արժեքի հաշվարկը, դրա վճարման կարգը

Մատակարարվող էլեկտրական էներգիայի սակագինը սահմանում է Հանձնաժողովը:

Հանձնաժողովի կողմից էլեկտրական էներգիայի սակագնի փոփոխման դեպքում սահմանված կտր սակագինը ուժի մեջ է մտնում Հանձնաժողովի սահմանած ժամկետից:

Սպառված էլեկտրաէներգիայի քանակությունը, բացառությամբ սույն պայմանագրի 3.4 և 3.5 կետերով Նախատեսված դեպքերի, որոշվում է Սպառողի առևտրային հաշվիչի՝ տվյալ հաշվարկային ամսվա և տվյալ հաշվարկային ամսվան նախորդող ամսվա գրանցված ցուցմունքների տարբերությամբ, իսկ չափիչ տրանսֆորմատորների առկայության դեպքում՝ այդ տարբերությունը բազմապատկելով նաև դրանց տրանսֆորմացիայի գործակցով:

Եթե առևտրային հաշվիչն անմիջապես գրանցում է հաշվարկային ժամանակահատվածում ծախսված էլեկտրաէներգիայի քանակը, ապա որպես հաշվարկային ամսվա ընթացքում սպառված՝ ընդունվում է էլեկտրաէներգիայի այդ քանակը:

Եթե առևտրային հաշվառքի սարքը տեղադրված է սահմանազատման կետից (հավելված N2) դուրս, ապա առևտրային հաշվառքի սարքով հաշվառված էլեկտրաէներգիայի քանակին գումարվում կամ այդ քանակից հանվում է առևտրային հաշվառքի սարքի տեղադրման և սահմանազատման կետերի միջև էլեկտրատեղակայանքներում առաջացած էլեկտրաէներգիայի տեխնոլոգիական կորուստների մեծությունը: Առևտրային հաշվառքի սարքի խախտման (էլեկտրաէներգիայի քանակության սխալ գրանցում) դեպքում սպառված էլեկտրաէներգիայի քանակությունը որոշվում է հաշվարկային եղանակով՝ համաձայն ԷՄՕԿ Ի 12-րդ գլխի պահանջների:

Առևտրային հաշվիչի ցուցմունքը գրանցում է Մատակարարը՝ տվյալ հաշվարկային ամսվա վերջին և հաջորդ ամսվա առաջին երկու աշխատանքային օրվա ընթացքում: Եթե սույն պայմանագրի 8-րդ գլխով նախատեսված է Սպառողի ներկայությամբ առևտրային հաշվիչի ցուցմունքը գրանցելու Մատակարարի պարտավորություն, ապա վերջինս պարտավոր է Սպառողի առևտրային հաշվիչի ցուցմունքը գրանցել դրա ներկայությամբ նախապես՝ առնվազն 3 օր առաջ գրավոր տեղեկացնելով առևտրային հաշվիչի ցուցմունքի գրանցման օրվա և ժամի մասին: Սպառողի չներկայանալու դեպքում Մատակարարն օրվա ունի առևտրային հաշվիչի ցուցմունքը գրանցել առանց Սպառողի:

Հաշվարկային ամսվա ընթացքում Սպառողի կողմից սպառված էլեկտրաէներգիայի արժեքը որոշվում է Հանձնաժողովի կողմից սահմանված սակագների (հավելված N3) և սպառված էլեկտրաէներգիայի քանակության արտադրյալով:

Սպառողը նախորդ ամսվա ընթացքում սպառված էլեկտրական էներգիայի արժեքը պարտավոր է վճարել իր կողմից սպառված էլեկտրական էներգիայի քանակի և արժեքի մասին համապատասխան տեղեկատվությունը սույն պայմանագրի 2.2 կետի 3-րդ ենթակետով նախատեսված սպասարկման կետերում տեղադրվելուց, իսկ սույն պայմանագրի 8-րդ գլխով տեղեկացման այլ կարգ նախատեսված լինելու դեպքում, այդ կարգով տեղեկացնելուց հետո 7 օրվա ընթացքում:

4. Սպառողի էլեկտրամատակարարման ընդհատման, սահմանափակման, դադարեցման և վերականգնման պայմանները

Մատակարարի կողմից պլանային - նախագրուշական աշխատանքներ կատարելու նպատակով

Սպառողի հոսանքագրվումը (պլանային ընդհատում) թույլատրվում է ԷՄՕԼ-ի 27-րդ կետով սահմանված //

2. Մատակարարը Սպառողի էլեկտրամատակարարման պլանային ընդհատումը պետք է իրականացնի աշխատանքային օրերին՝ ԷՄՕԼ-ի 27-րդ կետով սահմանված ժամերին:
- 4.3. Սպառողի էլեկտրամատակարարման սահմանափակումները և վերականգնումն իրականացվում են սույն պայմանագրի 7.4 կետով նշված կարգի պահանջների համաձայն կազմված ծրագրերով:
- 4.4. Մատակարարը պարտավոր է դադարեցնել Սպառողի էլեկտրամատակարարումը՝
 - 1) Սպառողի գրավոր պահանջով և առաջարկված ժամկետում:
 - 2) մարդկանց կյանքի և առողջության անվտանգությունն՝ ապահովելու համար՝ Հայաստանի Հանրապետության տեխնիկական կանոնակարգերով սահմանված դեպքերում:
 - 3) Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված դեպքերում:
- 4.5. Մատակարարն իրավունք ունի դադարեցնել Սպառողի, (բացառությամբ վթարային կամ տեխնոլոգիական հզորություն ունեցող Սպառողի) էլեկտրամատակարարումը՝
 - 1) սպառված էլեկտրաէներգիայի դիմաց սույն պայմանագրի 3.9 կետով սահմանված ժամկետում վճարում չկատարելու դեպքում՝ առնվազն 3 օր առաջ գրավոր կամ Սպառողին հասու այլ ձևերով զգուշացնելուց հետո:
 - 2) պարտքի մարման ժամանակացույցի խախտման դեպքում՝ ապահովելով սույն կետի 1-ին ենթակետով սահմանված ընթացակարգը:
 - 3) եթե Սպառողը էլեկտրաէներգիան սպառել է առևտրային հաշվառքի սարքի միտումնավոր խախտումով կամ առանց առևտրային հաշվառքի սարքի, կամ առևտրային հաշվառքի սարքի շրջանցումով:
 - 4) առևտրային հաշվառքի վերականգնման կամ առևտրային հաշվառքի սարքի փոխարինման նպատակով՝ մինչև 3 ժամ:
- 4.6. վթարային կամ տեխնոլոգիական հզորություն ունեցող Սպառողի էլեկտրամատակարարումը դադարեցվում է ԷՄՕԼ-ով սահմանված դեպքերում և կարգով:
- 4.7. Պարտքի առկայության դեպքում Մատակարարը կպող է չդադարեցնել Սպառողի էլեկտրամատակարարումը, եթե Սպառողը ներկայացրել է Մատակարարի համար ընդունելի վճարման նրաշխիքներ կամ նրա հետ կազմվել է պարտքի մարման ժամանակացույց:
- 4.8. Մատակարարը Սպառողի էլեկտրամատակարարման չպլանավորված (արտապլանային) ընդհատումը պարտավոր է վերականգնել ԷՄՕԼ-ի 28-րդ կետով սահմանված ժամկետներում, իսկ եթե Սպառողի էլեկտրամատակարարման պլանային ապահովում է էլեկտրամատակարարման վերականգնման ավելի կարճ ժամանակահատված, ապա՝ այդ ժամանակահատվածում, որը կողմերը պարտավոր են սահմանել սույն պայմանագրի 8-րդ գլխով:
- 4.9. Եթե էլեկտրամատակարարման ընդհատումը տևի է ունեցել առևտրային հաշվիչից անմիջապես հետո տեղեկրված ավտոմատի անջատման արդյունքում, ապա Մատակարարը Սպառողի էլեկտրամատակարարումը՝ պարտավոր է վերականգնել ԷՄՕԼ-ի 29-րդ կետով սահմանված ժամկետներում:
- 4.10. Սպառված էլեկտրաէներգիայի դիմաց վճարման համար հատկացված ժամկետի խախտման դեպքում Սպառողի էլեկտրամատակարարումը դադարեցնելուց հետո Մատակարարը սպասարկման օրերին (տարվա բոլոր օրերը, բացառությամբ կիրակի օրերի, ժամը 09:00-ից մինչև 17:00-ը) պարտավոր է այն վերականգնել ԷՄՕԼ-ի 52-րդ կետով սահմանված կարգով:

5. Կողմերի պատասխանատվությունը

- 5.1. Սույն պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենքներով և ԷՄՕԼ-ով սահմանված կարգով:

6. Ֆորս մաժորային իրավիճակներ

- 6.1. Կողմերը սույն պայմանագրով սահմանված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվություն չեն կրում, եթե դա հետևանք է արտակարգ և անկանխելի դեպքերի և հանգամանքների, որոնք ստեղծվել են կողմերի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով)՝ քնական աղետները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները (ինչպես օրինակ, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները, պտտահողմերը), որոնք խոչընդոտում են կողմերի գործունեությունը կամ հանգեցնում են նրանց ստանձնած պարտավորության կատարման ձգձգման կամ դադարեցման՝ անկախ նրանց կողմից գործադրված ջանքերի՝ խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի՝ ազդեցությունը:

7. Լրացուցիչ պայմաններ

- 7.1. Մատակարարն իրավունք ունի Սպառողի կողմից վճարման համար սույն պայմանագրով սահմանված ժամկետի խախտման դեպքում խախտմանը հաջորդող օրացուցային տարում 3 անգամ այն կրկնելու դեպքում ԷՄՕԼ-ի 50-րդ կետով սահմանված կարգով Սպառողից պահանջել կանխավճար կամ իր համար ընդունելի վճարման այլ նրաշխիքներ, որը ներկայացնելուց Սպառողի հրաժարվելու դեպքում Մատակարարն իրավունք ունի նաև Սպառողին (բացառությամբ վթարային կամ տեխնոլոգիական

հզորություն ունեցող Սպառողի) առնվազն 3 սպասարկման օր...

գգոշացնելուց հետո դադարեցնել նրա էլեկտրամատակարարումը:

7.3 Սպառողի կողմից առևտրային հաշվառքի սարքը կնքելու դեպքում, այդ մասին սույն պայմանագրի №1 հավելվածում կատարվում է համապատասխան գրառում:

7.4 Հայաստանի Հանրապետության տեխնիկական կանոնակարգերով նախատեսված դեպքերում կողմերը պարտավոր են սույն պայմանագրին կցել անբաժանելի մաս հանդիսացող տեխնոլոգիական և (կամ) վթարային հզորությունների ամրագրման վերաբերյալ ակտ, որը կազմվում է Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2003 թվականի փետրվարի 21-ի №9Ն որոշմամբ հաստատված էլեկտրամատակարարման անխուսափելի սահմանափակումներ պահանջող իրավիճակներում էներգետիկայի բնագավառի լիցենզավորված անձանց կողմից իրականացվելիք գործողությունների ծրագրերի մշակման կարգի համաձայն:

7.5 Մատակարարը կամ Սպառողը կարող են սահմանազատման կետերում տեղադրել էլեկտրական էներգիայի որակի ցուցանիշները գրանցող և հիշող սարքեր:

7.6 Սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված էլեկտրական էներգիայի որակի ցուցանիշները գրանցող և հիշող սարքեր տեղադրելու դեպքում, կողմերը այդ մասին կազմում են երկկողմանի ակտ, որը կցվում է սույն պայմանագրին:

8. Այլ պայմաններ (որացնում են կողմերը)

8.1. Վճարման համար հատկացված ժամկետի խախտման դեպքում սպառողը վճարում է տույժ յուրա-
բանչյուր ուշացած օրվա համար չվճարված գումարի 0.1-ի չափով, բայց ոչ ավելի, քան ընդհանուր
գումարի 10-ը: Հեղ զրոյում, առաջնահերթության կարգով վճարվում է տույժը, ապա չվճարված գումարը:

9. Վեճերի լուծումը

9.1. Սույն պայմանագրի առնչությամբ առաջացած վեճերը լուծվում են կողմերի միջև բանակցությունների միջոցով, իսկ կողմերից մեկի դիմելի դեպքում՝ Հանձնաժողովի միջնորդությամբ:

9.2. Սույն պայմանագրի 9.1. կետը չի սահմանափակում կողմերի իրավունքը՝ վեճերը լուծելու դատական կարգով:

10. Պայմանագրի գործողությունը և լուծումը

10.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է անորոշ ժամկետով:

10.2. Սույն պայմանագիրը կազմված է երկու օրինակից, մեկական՝ յուրաքանչյուր կողմի համար:

10.3. Հանձնաժողովի կողմից էլեկտրական էներգիայի մատակարարման (Մատակարար-մինչև 6(10) կՎ լարման ցանցերից սնվող Սպառող (բացառությամբ բնակչության)) պայմանագրի նոր օրինակելի ձև հաստատելու կամ գործող 'օրինակելի ձևում' փոփոխություններ կամ լրացումներ կատարելու դեպքում կողմերը պարտավոր են Հանձնաժողովի սահմանած ժամկետում կնքել նոր պայմանագիր կամ համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարել գործող պայմանագրում:

10.4. Սույն պայմանագիրը կարող է լուծվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

11. Պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելվածների ցանկը

11.1. Հավելված №1 - Առևտրային հաշվառքի սարքի և առավելագույն թույլատրելի հզորության վերաբերյալ:

11.2. Հավելված №2 - Մատակարարի էլեկտրական ցանցի և Սպառողի սպառման համակարգի սահմանազատման կետի և էլեկտրատեղակայանքների շահագործման պատասխանատվության սահմանազատման վերաբերյալ ակտ:

11.3. Հավելված №3 - Մատակարարվող էլեկտրական էներգիայի սակագների վերաբերյալ:

Մատակարար՝

գտնվելու վայրը Անդրանիկի փ. 31

Հ/հ 160485109310

հեռախոս 0281-2-08-31

էլ. փոստի հասցեն

ֆաքս 0281-2-08-31

գործունեության լիցենզիա N

Նեկավար՝

Գ. Սմբատյան
(ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ.Տ.

4/4 24746631 54442430

Սպառող՝

գտնվելու վայրը Բեյկոնյան փ. 18

Հ/հ 900353301014

հեռախոս 253-78

էլ. փոստի հասցեն 2/4-08501023

ֆաքս

անձնագրի տվյալները

ղեկավար

Գ. Սմբատյան
(ստորագրություն, անուն, ազգանուն)
Կ.Տ.